

ԿՅԱՆՔ ՄԱՀՎԱՆԻՑ ՀԵՏՈ

Հայոց պատմությունը հարուստ է անհատներով, որոնց պետք է հավերժ հիշենք՝ իրենց հայրենանվեր գործունեության ու անձնվեր աշխատանքի համար: Խորհրդային տարիներին, սակայն, այդ պատմությունից էջեր էին պոկվում, ուր հիշատակված էին Հայ Առաքելական Եկեղեցին և նրա գործիչները: Հաճախ սևացվում էին թե՛ Եկեղեցին և թե՛ սպասավորները՝ նրանց կպցնելով «ժողովրդի թշնամի», «դաշնակներ» պիտակները:

Այս պատճառով էլ, սակայն, անհրաժեշտ է նշել, որ մեր ժողովուրդը քաջատեղյակ չէ 20-րդ դարի հայ հոգևորականության այն ներկայացուցիչների գործունեությանը, որոնք խիզախել են ի փառս հարազատ ժողովրդի: Սրա նրանցից մի քանիսը. Սուքիաս արքեպիսկոպոս Պարզյան, Ամենայն Հայոց Կաթողիկոս Խորեն Ա. Մուրադբեկյան, Մեսրոպ արքեպիսկոպոս Տեր-Մովսիսյան (Մեսրոպ Մագիստրոս), Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս Գարեգին Ա. Հովսեփյան, Ներսես արքեպիսկոպոս Մելիք-Թանգյան և ուրիշներ:

Եվ այսպես, Մեսրոպ արքեպիսկոպոս Տեր-Մովսիսյանը (աշխարհիկ անունը՝ Փարսադան Վարդանի Տեր-Մովսիսյան) ծնվել է 1865 թ. Տաթևի վիճակի Շիկաճող գյուղում: Իր ժամանակի չափանիշներով նա փայլուն կրթություն է ստացել: 1882 թ. ավարտել է Շուշվա թեմական, իսկ 1885-ին՝ Թիֆլիսի Ներսիսյան դպրոցները: 1891 թ. ոսկե մեդալով ավարտել է Դորպատի համալսարանը: Ապա մեկնել է Վիեննա և աշխատակցել Մխիթարյանների «Հանդես ամսօրյա» պարբերականին: 1892-ին, որպես հայագիտության ուսուցիչ, հրավիրվել է Ս. Էջմիածին՝ Գևորգյան ճեմարանում դասավանդելու: 1893-ի ապրիլի 24-ին ձեռնադրվել է աբեղա և ստացել Մեսրոպ անունը, իսկ նույն տարվա հուլիսի 21-ին նշանակվել է նորընտիր Կաթողիկոս Մկրտիչ Ա. Վանեցուն (Խրիմյան Հայրիկ) Երուսաղեմից Էջմիածին ուղեկցող պատգամավորության անդամ: Իր առաքելությունը գերազանց կատարելու համար արժանացել է թուրքական կառավարության «Մեջիդիե» երրորդ աստիճանի շքանշանի: Մեկ ամիս անց նրան շնորհվել է վարդապետի աստիճան: 1894 թ. ամռանը մասնակցել է Ինսբրուկի մարդաբանների և ժնևի արևելագետների վեհաժողովին: 1895 թ. դեկտեմբերի 16-ին նշանակվել է Երևանի թեմական դպրոցների տեսուչ, իսկ 1896-ի սեպտեմ-

բերի 4-ին՝ Շուշվա թեմական դպրոցների տեսուչ: 1896-ի ապրիլի մեկին Մկրտիչ Ա. Կաթողիկոսի կոնդակով Մեսրոպ վարդապետը նշանակվում է Երեմիա արքեպիսկոպոսի թարգմանիչ՝ Սանկտ-Պետերբուրգում Նիկոլայ Երկրորդ թագավորի թագադրության հանդիսություններին մասնակցելու համար: 1898-ին նա նշանակվում է Շուշվա կոնսիստորիայի նախագահ, իսկ 1899-ի դեկտեմբերին՝ բարձրագույն բարեհաճ թույլտվությամբ ընդունվում է Սանկտ-Պետերբուրգի կայսրական համալսարանի արևելյան լեզուների ֆակուլտետը: 1902 թ. հոկտեմբերի 3-ին պաշտպանում է թեզ՝ «Սասունցի Դավիթի հայերեն թարգմանության պատմությունը» թեմայով՝ ստանալով հայ բանասիրության մագիստրոսի աստիճան (այստեղից էլ մագիստրոս նրա մականունը): 1903 թ. փետրվարին Մեսրոպ վարդապետը վերադառնում է Էջմիածին և նշանակվում «Մնայուն ուսումնական» հանձնաժողովի անդամ:

Բարձր գնահատելով Մեսրոպ Մագիստրոսին, որպես ոչ շարքային եկեղեցականի, այլ նաև քաղաքագետի և նուրբ դիվանագետի հատկություններով օժտված մի մարդու, Խրիմյան Հայրիկը 1904 թ. դեկտեմբերի 4-ին նրան և Ներսես արքեպիսկոպոսին ուղարկեց Սանկտ-Պետերբուրգ: Այնտեղ նրանք պետք է խնդրեին թագավորին և ռուսական կառավարությանը՝ Հայ Եկեղեցու ունեցվածքը վերադարձնելու և եկեղեցական-ծիսական դպրոցները վերաբացելու մասին: 1905 թ. փետրվարին Սանկտ-Պետերբուրգում կայացած բանակցությունների շնորհիվ նույն տարվա օգոստոսին ոչ միայն վերաբացվեցին հայկական դպրոցները, այլև վերադարձվեցին եկեղեցական կալվածքներն ու ունեցվածքը: Պատվիրակությունը վերադարձավ հաղթանակով:

Հայ-թաթարական (ադրբեջանական) ընդհարումների ժամանակ Խրիմյան Հայրիկը Մեսրոպ Մագիստրոսին ճանապարհում է հայրենի Զանգեզուրի և Նախիջևանի գավառները, ուր նա կազմակերպում է հայերի ինքնապաշտպանությունը: Այստեղ նա անցկացրել է իր կյանքի ամենադժվարին ժամանակաշրջանը՝ 1905 թ. մայիսի 15-ից մինչև 1906 թ. ապրիլի 20-ը:

1906 թ. հունիսի 7-ից մինչև 1907 թ. Մեսրոպ Մագիստրոսը Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանի տեսուչն էր, իսկ 1907 թ. հունիսի 20-ից մինչև 1908 թ. փետրվարի 17-ը արտասահմանում զբաղված էր հայ ձեռագրերի ուսումնասիրությամբ: Այդ նպատակով նա այցելել է Երուսաղեմ, Կոստանդնուպոլիս, Հռոմ, Փարիզ, Լոնդոն, Օքսֆորդ և Վենետիկ:

1908 թ. մարտի 25-ին Թիֆլիսում մեծ շուքով տոնվում էր Կովկասի փոխարքա կոմս Ի. Ի. Վորոնցով-Դաշկովի ապայության 50-ամյակը: Այդ միջոցառմանը մասնակցելու և փոխարքային շնորհավորելու նպատակով Ս. Էջմիածնի միաբանությունը Թիֆլիս ուղարկեց Հուսիկ արքեպիսկոպոսին և Մեսրոպ Մագիստրոսին:

1908-ի սեպտեմբերին կաթողիկոսական տեղապահ Տ. Գևորգ արքեպիսկոպոս Սուրենյանցի առաջարկությամբ Մեսրոպ Մագիստրոսը հաստատվեց Սինոդի անդամ: Եկեղեցական ժողովը, որն ընտրեց նոր կաթողիկոս, Մեսրոպ վարդապետը ընտրելու չորս ձայն ուներ՝ որպես Սինոդի անդամ, որպես Աղթամարի կաթողիկոսության ներկայացուցիչ, Դիարբեքիրի և Կղեի առաջնորդարանների ներկայացուցիչ:

1909 թ. գարնանը նորընտիր Կաթողիկոս Մատթեոս Բ Իզմիրլյանին Կ.Պոլսից Էջմիածին ուղեկցելու համար ստեղծվեց պատվիրա-

կություն, որի կազմի մեջ մտան Գարեգին արքեպիսկոպոս Սաթունյանը, Աշոտ եպիսկոպոս Շախեյանը, Մեսրոպ վարդապետ Տեր-Մովսիսյանը և Բաբկեն վարդապետ Աղավելյանը: Նույն թվականի մայիսի 2-ին այս պատվիրակությունը մեկնեց Էջմիածնից, իսկ մայիսի 13-ին ժամանեց Կոստանդնուպոլիս: Այստեղ նորընտիր Ամենայն Հայոց Կաթողիկոս Մատթեոս Բ Իզմիրլյանին և ժամանած պատվիրակությանը Դոլմա Բախչե պալատում ընդունեց Օսմանյան կայսրության սուլթան Մուհամեդ Հինգերորդը: Մայիսի 27-ին նորընծա Կաթողիկոսը, նրան ուղեկցող անձինք, ինչպես նաև պատվիրակությանը միացած Կոստանդնուպոլսի Ազգային ժողովի ատենապետ և հասարակական գործիչ Մ. Զերազը ժամանեցին Օդեսա, իսկ այնտեղից մեկնեցին Սանկտ-Պետերբուրգ, ուր Պետերգոֆի կայսերական պալատում ներկայացվեցին Ռուսաստանի կայսր Նիկոլայ Երկրորդին և վարչապետ Ստոլիպինին: 1909 թ. հոկտեմբերի 25-ին, Գյուտ խաչի տոնին, Ս. Էջմիածնում տեղի ունեցավ եպիսկոպոսական ձեռնադրություն, որի ժամանակ Մատթեոս Բ Իզմիրլյանը եպիսկոպոս ձեռնադրեց Մշո հայոց առաջնորդ Ներսես ծ. վարդապետ Խարախանյանին, Աստրախանի թեմի առաջնորդ Մխիթար ծ. վարդապետ Տեր-Մկրտչյանին, Սինոդի անդամ Մեսրոպ ծ. վարդապետ Տեր-Մովսիսյանին և Աստրպատականի հոգևոր առաջնորդ Կարապետ ծ. վարդապետ Մկրտչյանին:

Այդ առիթով «Արարատ» ամսագիրը Մեսրոպ Մագիստրոսի մասին գրում էր. «...յուր ուսումնական վարկը, վարած պաշտոնները և գրավոր վաստակները բավական էին, որ Մեսրոպ սրբազանը եպիսկոպոս դարձած լիներ վաղուց, իսկ Սինոդի անդամ լինելը արդեն իրավունք էր տալիս նրան եպիսկոպոսության»:

1909 թ. դեկտեմբերին Վեհափառ Հայրապետը Մեսրոպ Մագիստրոսին Սանկտ-Պետերբուրգ ուղարկեց Մեծ իշխան, Կովկասի նախկին փոխարքա Միխայիլ Նիկոլաևիչի թաղման արարողությանը մասնակցելու և հանձնարարեց նրան արծաթյա պսակ դնել հանգուցյալի դագաղին: Սանկտ-Պետերբուրգում դեկտեմբերի 28-ին Մեսրոպ Մագիստրոսին ընդունեց Ռուսիո թագավորը: 1910—11 թթ. Մեսրոպ սրբազանը Գևորգյան ճեմարանի տեսուչն էր:

1910 թ. հունիսի 26-ին Մատթեոս Բ Կաթողիկոսը ժամանեց Թիֆլիս, որտեղից ուղևորվեց Մցխեթա, ուր իր հանգիստն էր անցկացնում Կովկասի փոխարքան: Վեհափառ Հայրապետին ուղեկցում էին Սինոդի անդամ Մեսրոպ եպիսկոպոսը և Ս. Էջմիածնի դիվանապետ Բագրատ վարդապետը: Ճրույցների ընթացքում, որպես թարգմանիչ, հանդես էր գալիս Մեսրոպ սրբազանը: Քննվում էին տարբեր խնդիրներ՝ կապված Հայ Եկեղեցու և հայ ժողովրդի հետ ընդհանրապես: Ի պատիվ թանկագին հյուրերի՝ փոխարքան ճաշկերույթ տվեց:

1910 թ. վախճանվեց Վրաստանի և Իմերեթիայի հայոց թեմի առաջնորդ Գարեգին արքեպիսկոպոս Սաթունյանը: Վեհափառ Հայրապետը հանգուցյալ Գարեգին արքեպիսկոպոսի թաղմանը ներկայացուցիչ կարգեց Սինոդի անդամ Մեսրոպ եպիսկոպոսին այն մտադրությամբ, որ շուտով նրան նշանակի Վիրահայոց առաջնորդ: Սակայն այդ նույն թվականի դեկտեմբերին Իզմիրլյան Կաթողիկոսը վախճանվեց, և նրա մտադրությունը չիրականացավ: Դեկտեմբերի 11-ին Մատթեոս Բ Կաթողիկոսի հուղարկավորությանը Մեսրոպ սրբազանը, լինելով Սինոդի անդամ, ներկայացնում էր նաև Երուսաղեմի և Կոստանդնուպոլսի պատրիարքությունները:

1908—11 թթ. Դավիթ-խան Ավան-Յուզբաշու միջոցներով Ս. Էջմիածնում կառուցվեց Մատենադարանի նոր շենքը, որի շինարարությունն իրականացվում էր Մեսրոպ Մագիստրոսի անմիջական հսկողությամբ: Արդեն 1912 թ. ձեռագիր մատյանները տեղափոխվեցին այնտեղ:

1911 թ. հոկտեմբերի 8-ին № 20872 գրությամբ Վիրահայոց թեմի ժամանակավոր կառավարիչ կարգվեց Եփրեմ եպիսկոպոսը:

1911 թ. դեկտեմբերին Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրություններին Մեսրոպ Մագիստրոսը երրորդ թեկնածուն էր: Այդ ընտրություններում արևմտահայ որոշ թեմեր նրան արժանացրին իրենց ներկայացուցիչը լինելու պատվին: Ամենայն Հայոց Կաթողիկոս ընտրվեց Գևորգ Ե Սուրենյանցը (Տպղիսեցին): Նրա իրավունքները ռուսաց թագավորի կողմից ճանաչվելու համար ստեղծվեց պատգամավորություն, որի կազմում, նորընտիր կաթողիկոսից բացի, մտան՝ Սինոդի անդամ Մեսրոպ եպիսկոպոսը, Երևանի փոխթեմակալ Խորեն եպիսկոպոսը, Մայր Աթոռի դիվանապետ Բագրատ և Սինոդի անդամ Մատթևոս վարդապետները: Սանկտ-Պետերբուրգում հայ հոգևորականության պատգամավորությանն ընդունեց ռուսաց կայսր Նիկոլայ Երկրորդը և թագուհին:

1912 թ. հուլիսի 5-ին Մեսրոպ Մագիստրոսը հաստատվեց որպես Էջմիածնի տաճարի վերակառուցման կոմիտեի նախագահ: Նույն թվականի հոկտեմբերի 2-ից մինչև նոյեմբերի 5-ը Մեսրոպ Մագիստրոսը գտնվում էր Սանկտ-Պետերբուրգում:

Ռուսաստանում ավանդույթ կար, որի համաձայն բարձրաստիճան պաշտոնյայի կինը կամ ցարական տոհմին պատկանող ներկայացուցչուհին զբաղվում էր բարեգործությամբ՝ Եկեղեցու հետ համագործակցված: Բարեգործությամբ զբաղվում էին թագուհին, նրա քույրը, թագավորի դուստրերը: Կովկասում բոլոր փոխարքաների և կառավարիչների կանայք, զբաղվելով բարեգործությամբ, միաժամանակ շփման ուղիներ էին գտնում Կովկասի բոլոր Եկեղեցիների և կրոնների ղեկավարների հետ: Հենց այդ գաղափարներով էլ ղեկավարվում էր կոմսուհի Վորոնցովա-Դաշկովան՝ 1906 թ. դեկտեմբերի 20-ին այցելելով Ամենայն Հայոց Կաթողիկոսին, Էջմիածնի վանքին նվիրեց հարազատ պապի՝ Մ. Ս. Վորոնցովի՝ Կովկասի նախկին փոխարքայի դիմանկարը:

Եվ այսպես, 1912 թ. հունվարի 18-ին թագավորը Մեսրոպ սրբազանին նշանակեց Վիրահայոց հոգևոր առաջնորդ: Մեկ ամիս անց Գևորգ Ե Կաթողիկոսը թիվ 282 իր կոնդակով վավերացրեց այդ նշանակումը: Այդ նույն թվականին էլ Մեսրոպ Մագիստրոսը Ռոմանովների Տան թագավորության 300-ամյակի պատվին արժանացավ Բրոնզե մեդալի:

Գրավելով Վիրահայության առաջնորդի պաշտոնը՝ Մեսրոպ սրբազանը փաստորեն դարձավ Ռուսաստանում գործող հայոց հոգևոր թեմերի ղեկավարների շարքում առաջինը՝ իր նշանակությամբ զիջելով սոսկ Ամենայն Հայոց Կաթողիկոսին: Բոլոր գրագրությունները Կովկասի փոխարքա կոմս Ի. Ի. Վորոնցով-Դաշկովի և Ամենայն Հայոց Կաթողիկոսի միջև կատարվում էին հիմնականում Մեսրոպ սրբազանի միջոցով: Նկատելով նրա մեջ ոչ թե սոսկ հոգևորականի, այլ նաև արտակարգ ընդունակություններով օժտված մարդու՝ փոխարքան հաճախ էր խորհրդակցում Մեսրոպ Մագիստրոսի հետ ընդհանրապես հայությանը վերաբերող հարցերի շուրջ:

Պետք է նշել, որ ցարիզմի քաղաքականությունը Կովկասում ընդհանրապես և հայերի հանդեպ՝ մասնավորապես, կոմս Գ. Գալիցինի ժամա-

նակներից կտրուկ փոխվել էր: Եթե Գալիցինի ժամանակ այն խիստ հակահայկական էր, իսկ հետագայում՝ Ստոլիպինյան ռեակցիայի տարիներին նաև հակադաշնակցական (նկատի առնելով դաշնակցականների դեմ Նովոչերկասկում տեղի ունեցած՝ Լուժինյան դատավարությունը, Եկեղեցուց առգրավված ունեցվածքը, Հաղպատի գյուղական ապստամբության ճնշումը, ծխական դպրոցների փակումը և այլն), ապա նոր փոխարքայի՝ կոմս Իլարիոն Իվանովիչ Վորոնցով-Դաշկովի Կովկաս ժամանելուն պես, հատկապես 1909 թ. հետո, ցարական վարչակարգի քաղաքականությունը Կովկասում հայերի հանդեպ աստիճանաբար սկսվեց փոխվել: Այդ բանում կար նաև Մեսրոպ սրբազանի ծառայությունը: Համոզված կարելի է ասել, որ Մեսրոպ Մագիստրոսը մեր ժողովրդի պատմության մեջ կատարեց այն դերը, ինչ 18-րդ դարում կատարեց Հովսեփ Արղությանը, իսկ 19-րդ դարում՝ Ներսես Կաթողիկոս Աշտարակեցին:

Վորոնցով-Դաշկովը, լինելով ռուսական բանակի քաջարի սպաներից մեկը, մասնակցելով ռուս-թուրքական պատերազմին՝ 1877—78 թթ., հասկացավ, որ ռուսաստանյան հարավի և արևելքի համար վտանգ է ներկայացնում Օսմանյան կայսրության հզորացումը: Հասկացավ նաև, որ հայ ժողովուրդը բաժանված լինելով երկու մասի, կարելի է այդ ուժն օգտագործել որպես արգելափակոց՝ դեպի Կովկաս թուրքական ազդեցության տարածման, իսկ ապա նաև ռուսական Միջին Ասիա թափանցելու դեմ: Մեսրոպ սրբազանը կռահեց փոխարքայի մտադրությունները և անձամբ ընդառաջ գնաց նրան: 1913 թ. ապրիլի 27-ին նա գլխավորեց Կովկասի փոխարքայի զինվորական մասի օգնականի՝ գեներալ Շատիլովի հետ հանդիպման հայկական պատվիրակությունը, որի կազմում էին Ա. Խատիսյանց, Ս. Հարությունյանը, Քալանթարը և Մ. Պապաջանյանը: Պատվիրակությունը գեներալի ուշադրությունը հրավիրեց թուրքահպատակ հայերի ծանր վիճակի վրա, խնդրեց նրան օգնություն ցուցաբերել՝ ինքնապաշտպանություն կազմակերպելու թշնամական հարձակումների դեմ: Պատվիրակության խնդրանքը հասավ փոխարքային, որն իր հերթին այն փոխանցեց թագավորին: Բայց, ինչպես պարզվեց հետագայում, դրա ժամանակը դեռևս չէր հասունացել: Ստանալով Սանկտ-Պետերբուրգի մերժումը, փոխարքան Վեհափառ Հայրապետին խնդրեց, որպեսզի վերջինս «իր սրբազնագույն հեղինակությամբ ներազդի խաղաղարար իմաստով որոշ չափով բորբոքված հայ բնակչության գաղափարների վրա և մեկ անգամ ևս հորդորի նրան՝ ծայրահեղ զսպվածության և հանգստության»: Սակայն փոխարքան շարունակում էր մտածել միացյալ ինքնավար Հայաստանի ստեղծման մասին՝ արևելյան և արևմտյան Հայաստանի տարածքում: Այս ուղղությամբ նրա բոլոր ծրագրերը Սանկտ-Պետերբուրգում հանդիպում էին կատաղի դիմադրության՝ պետական դումայի անդամների կողմից: Ծուտով, սակայն, ամեն ինչ փոխվեց. 1914 թ. հուլիսի 15-ին Ավստրո-Հունգարիան Սերբիային պատերազմ հայտարարեց: Սկսվեց Առաջին համաշխարհային պատերազմը: Պատերազմի սկզբից Մեսրոպ Մագիստրոսն ընտրվեց Հայոց ազգային բյուրոյի պատվավոր նախագահ: Բյուրոն նպատակ էր դրել ամենայն օգնություն ցույց տալ Արևմտյան Հայաստանի բնակչությանը, միջոցներ էր ձեռնարկում հայ կամավորական ջոկատների կազմակերպմանը, որոնք ռուսական բանակի կազմում պետք է ազատագրեին Արևմտյան Հայաստանը թուրքական լծից: 1914 թ. օգոստոսին Մեսրոպ եպիսկոպոսը մեկն էր նրանցից, ով Բուլղարիայից հրավիրեց Անդրանիկ զորավարին կամավորական ջոկատների

ստեղծման համար և նրան ներկայացրեց Կովկասի ռուսական զինվորական հրամանատարությանը: Կովկասում հայ կամավորական ջոկատների ստեղծման գաղափարը Վորոնցով-Դաշկովին ներկայացնողը նույնպես Մեսրոպ սրբազանն էր:

Պատերազմի սկզբում Մեսրոպ սրբազանը ձեռնարկեց կամավորական ջոկատների կազմակերպման գործը, օգնություն էր ցուցաբերում վիրավոր մարտիկներին, փախստականներին, կազմակերպում և ռազմաճակատ ուղարկում սանիտարա-բժշկական մասնագետներ: 1914 թ. նոյեմբերին Երևանի փոխթեմակալ Խորեն եպիսկոպոս Մուրադբեկյանի, Ազգային խորհրդի փոխնախագահ Հովսեփ Խունունցի, գրողներ Շիրվանզադեի և Թումանյանի հետ այցելեց ռազմաճակատ:

Ներսես եպիսկոպոսի վրա էր դրված նաև Արևմտյան Հայաստանի թեմերի ժամանակավոր կառավարումը:

1915 թ. օգոստոսի 23-ին Ամենայն Ռուսիո կայսր Նիկոլայ Երկրորդը անսպասելիորեն ինքն իրեն հռչակեց ռուսական բանակի Գերագույն գլխավոր հրամանատար: Դա անսպասելի էր, որովհետև Մեծ Իշխան գեներալ Նիկոլայ Նիկոլաևիչ Ռոմանովը լիարժեք ձևով կատարում էր Գերագույն Գլխավոր հրամանատարի իր պարտականությունները: Պնդում էին, թե թագուհին՝ Ալեքսանդրա Ֆյոդորովնան, չհամակրելով Մեծ իշխանին, արեց ամեն ինչ, որպեսզի վերջինս հեռացվի բանակի հրամանատարությունից: Նիկոլայ Երկրորդը հարազատ հորեղբորը հենց այնպես չազատեց գլխավոր հրամանատարի պաշտոնից, այլ, որպես աքսորավայր՝ Կովկաս ուղարկեց՝ նշանակելով նրան Կովկասի փոխարքա և Կովկասյան բանակի գլխավոր հրամանատար: Այդպիսով նաև վերջակետ դրվեց Կովկասում Վորոնցով-Դաշկովի տասնմեկամյա փոխարքայությանը: Վերջինիս հետ ոչ-ոք չխորհրդակցեց, և 78-ամյա փոխարքան, վիրավորվելով իր թագավորից, լռելյայն, չսպասելով փոխարինողին, հեռացավ Կովկասից:

Մեսրոպ Մագիստրոսի գործունեությունն իր գագաթնակետին հասավ Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին: Նա ամենահեղինակավոր եկեղեցականն էր Կովկասի բոլոր հավատքների ղեկավար անձնակազմերում:

Մեսրոպ Մագիստրոսը քչերից մեկն էր, ում հետ անմիջական շփման մեջ էր մտնում Նիկոլայ թագավորը: Սրբազանը ցանկացավ մոտ կապեր հաստատել նաև նոր փոխարքայի հետ: Ոգևորված ռուսական բանակի հաղթանակներով և Արևմտյան Հայաստանի ազատագրումով, 1916 թ. Մեսրոպ սրբազանը հեռագրում էր Կովկասի փոխարքա Նիկոլայ Նիկոլաևիչին. «Այսուհետև Հայաստանն ազատագրվում է սարսափելի լծից, և հայոց ժողովուրդը օրհնում է Ձեր անունը որպես սուրբ, փոխանցում գալիք սերունդներին»: Բայց Կաթողիկոսի շրջապատի որոշ ներկայացուցիչներ ձգտում էին սևացնել Մեսրոպ Մագիստրոսին Վեհափառի աչքում: Վորոնցով-Դաշկովի պաշտոնից հեռանալուց հետո Կաթողիկոսն անցավ Մեսրոպ Մագիստրոսի հակառակորդների կողմը: 1916 թ. մայիսի 7-ի Կովկասի նոր փոխարքա Մեծ Իշխան Նիկոլայ Նիկոլաևիչին հղած կոնդակում (թիվ 1082) Կաթողիկոսը խնդրում էր Մեսրոպ եպիսկոպոսին հաստատել որպես Ատրպատականի թեմի հոգևոր առաջնորդ, իսկ Ատրպատականի առաջնորդ Մխիթար եպիսկոպոսին նշանակել Վիրահայության առաջնորդ: Զրպարտիչները Կաթողիկոսին նույնիսկ գրություն ներկայացրին, որում հաստատում էին «այն հիմունքները և տրվյալները, որոնք պատճառ են եղած Մեսրոպ եպիսկոպոսի Տպխիսի թեմից

հանելու և Ատրպատականի թեմն ուղարկելու»: Մեսրոպ սրբազանի դեմ եղած մեղադրանքները հետևյալն էին. «ա. Առաջնորդ հաստատվելուց հետո Տպխիս մտնելով և յուր անդրանիկ քարոզն ուղղելով ժողովրդին, իմիջիայլոց հայտնում է, որ «ինքը պիտի հետևե և նմանե յուր արժանավոր նախորդներին՝ Այվազյանին և Սեդրակյանին», մոռանալով, որ այդ նախորդների մեջ կար և այժմյան Հայրապետը. բ. Առաջնորդարան մտած օրից մինչև այսօր ոչ մի տեղեկագիր, զեկուցագիր, տեղեկություն չի հաղորդել յուր թեմի և յուր գործունեության մասին ո՛չ Հայրապետին, ո՛չ Սինոդին: Գործել է անձնիշխան և համարվում է «ինքնակալ» յուր թեմի մեջ»: Մյուս մեղադրանքները հանգում էին այն բանին, որ վերջինս անձնական փառասիրություն ունի, որ թեմի դպրոցներին ուշադրություն չի դարձնում, որ հեռագրեր է ուղարկում նաև գլխավոր հրամանատարի զորակայան, մի բան, որ չի մտնում իր իրավունքների մեջ: Տեղեկանալով փոքարքային հղած կոնդակի մասին, Մեսրոպ սրբազանը Կաթողիկոսին գրեց հետևյալը. «Այդ կարգադրությունը՝ իմ նկատմամբ գաղտնի կատարված, հանկարծակիի բերավ ինձ և քաղաքիս հայ ազգաբնակչությանը, որ զարմացած ու վրդովված միմյանցից և ինձ հարցնում էին, թե ինչն է պատճառը: Ինչ բացատրություն կարող էի տալ, բացի միայն այն, որ ոչինչ չգիտեմ»: Մեսրոպ եպիսկոպոսը ցանկանում էր ժամանել Էջմիածին, իմանալ, թե ինչն է իր մեղքը, ինչ սխալ է թույլ տվել... Նամակ է գրում Կաթողիկոսին, իսկ պատասխանը ստանում է Վեհափառ Հայրապետի տեղակալ Հուսիկ արքեպիսկոպոսից (Այդ օրերին Վիրահայության առաջնորդի թեկնածուներից մեկը), որը խիստ պաշտոնական ոճով հայտնում էր, թե «Նամակդ ստացա. խնդիրը հաղորդեցի Վեհափառ Հայրապետին: Առաջին խնդրիդ վերաբերությամբ Նորին Սրբությունը հայտնեց, որ կարիք չկա անձնական բացատրության, որովհետև անտարակուսելի բան չկա, եղածն եղած է և դրությունը չի կարելի փոխել: Ուստի և ներկայանալը միանգամայն ավելորդ և աննպատակ համարեց»: 1916 թ. հուլիսի 29-ին Կաթողիկոսին հղած իր նամակում Մեսրոպ Մագիստրոսը խնդրում էր իրեն նշանակել Սանահինի կամ Հաղպատի վանքերի վանահայր: Բայց Էջմիածինը դեմ էր դրան՝ պահանջելով նրանից անհապաղ մեկնել Ատրպատական: Նրան վտարում էին, և նա ստիպված էր մեկնել: 1916—1917 թթ. Մեսրոպ սրբազանը մնաց Ատրպատականում որպես թեմի առաջնորդ: 1918 թ. նա վերադարձավ Հայաստան և հաստատվեց Էջմիածնի վանքի մատենադարանապետի պաշտոնում, ուր մնաց մինչև 1920 թվականը: Վերադառնալով հայրենիք, նա չէր կարող հանգիստ նայել թշվառության մեջ տառապող ժողովրդին: Եվ այն օրերին, երբ մեկ այլ անվանի հոգևորական՝ Գարեգին եպիսկոպոս Հովսեփյանը, խաչն ու սուրը ձեռքին ոգևորում էր ժողովրդին Սարդարապատի ճակատամարտում, Մեսրոպ սրբազանն իր հերթին սովից ու ցրտից փրկում էր հայերին Դիլիջանում: Այստեղ էլ նրան հանդիպեց իր նախկին հովանավորյալը՝ զորավար Անդրանիկը, որն իր հուշերում հետագայում կգրի. «Մեսրոպ եպիսկոպոսին գտա ավելի քան հազար որբերի հետ, որոնց թվում կային տասնհինգամյա աղջնակներ»:

1918 թ. ամռանը Մեսրոպ եպիսկոպոսը Թիֆլիսում գտնվող Կովկասի գերմանական առաքելությունից պահանջում էր թույլ տալ գալ գաղթականներին վերադառնալու Սարդարապատ, Իգդիր և Դավալու՝ բերքը հավաքելու համար: Մեսրոպ սրբազանը կարողացավ համոզել Առաքելության ղեկավարներից մեկին՝ բարոն ֆոն Կրեսին՝ հեռագրել Բեռլին՝ կայզերական

ռեյխսկանցլեր Գերտլինգին՝ հայերի ծանր վիճակի վերաբերյալ: Բայց եթե Մեսրոպ սրբազանին հաջողվեց համոզել Կրեսին, ապա Գերտլինգին չհաջողվեց համոզել թուրքերին: Հայաստանում խորհրդային կարգեր հաստատվելուց հետո, 1922 թ. աշնանից մինչև 1931 թ. աշունը, Մեսրոպ սրբազանը վարում էր Պարսկա-Հնդկաստանի թեմի առաջնորդի պաշտոնը: Խորհրդային Հայաստանի ղեկավարները սկզբում նրան անձնագիր չտվեցին: Ս. Էջմիածինը Արարատյան թեմի փոխառաջնորդ Խորեն արքեպիսկոպոս Մուրադբեկյանի միջնորդությամբ պահանջում էր, որպեսզի Հայաստանի ժողկոմխորհի նախագահ Ս. Լուկաշինը տրամադրեր արտասահմանյան անձնագրեր: 1923 թ. հունվարի 30-ին Ս. Լուկաշինի հարցմանը՝ Մեսրոպ Մագիստրոսի վերաբերյալ, Հայշեկայի նախագահի տեղակալ Մելիք-Օսիպովը պատասխանեց. «Հնդկաստան նշանակված եպիսկոպոս Մեսրոպին անձնագիր տալու ժամկետի վերաբերյալ հայտնվում է, որ Հայշեկայի գծով եպիսկոպոս Մեսրոպը, որպես հայտնի կղերական, ինչպես նաև դաշնակցական գաղափարախոս, որը հայտնի է իր գործունեությամբ և ելույթներով Համաշխարհային պատերազմի ժամանակաընթացքում և ավելի ուշ՝ Հայաստանում դաշնակցական իշխանության տարիներին, չի կարող բաց թողնվել Հնդկաստան»: 1923 թ. ապրիլի 19-ին Մեսրոպ արքեպիսկոպոս Տեր-Մովսիսյանը, ժամանելով Երևան, անձամբ նամակով դիմեց Հայաստանի ժողկոմխորհի նախագահ Լուկաշինին, որպեսզի կարողանա մեկնել նշանակված թեմը: Շուտով Մեսրոպ սրբազանի համառությունը հաջողությամբ պսակվեց: Ստանալով արտասահմանյան անձնագիր, նա մեկնեց նշանակման վայր:

Այժմ մի քանի խոսք՝ կապված երբեմն հնչող այն մեղադրանքների հետ, թե իբր Մեսրոպ Մագիստրոսը համագործակցել է ՊԱԿ-ի հետ և եղել է նրա գործակալը: 1930 թ. Բեռլինում լույս տեսած «Պետական քաղաքական վարչություն-չեկիստի գրառումներ» Գ. Աղաբեկովի գրքում (Այս անձնավորությունը 1928—30 թթ. եղել է Միացյալ պետական քաղաքական վարչության արտասահմանյան բաժնի արևելյան բաժանմունքի պետը և ՍՊՔՎ-ի ռեզիդենտ Մերձավոր Արևելքում, 1930 թ. փախել է արտասահման) նկարագրված են 20-ական թվականների վերջերին Իրանում տեղի ունեցած իրադարձություններից: Հեղինակը մասնավորապես գրում է. «Սպահանի հայ եպիսկոպոսը Պարսկա-Հնդկական թեմի առաջնորդն էր: Այդ պաշտոնը զբաղեցնում էր Մեսրոպ արքեպիսկոպոսը՝ ծերունազարդ, չափազանց քաղաքավարի, կրթված և ազգամոլ մի մարդ: Զիսրանալով քաղաքականության մեջ, նա անդադրում հոգ է տանում հայ ժողովրդի կարիքների մասին: 1928 թ. նա շրջագայեց հնդկական իր հոտում և մեծ գումարներ ժողովեց հօգուտ Խորհրդային Հայաստանի: Ահա թե ինչու նրան համարում էին խորհրդային գործակալ: Սակայն, կրկնում եմ, այդ մարդը բացարձակապես խորթ էր ամեն մի քաղաքականության համար: Նրա միակ հոգսն էր պահպանել հայ ազգը որպես այդպիսին»: Մեսրոպ սրբազանը, հրաժարվելով համագործակցել պետանվտանգության մարմինների հետ, 1931 թ. աշնանը հետ կանչվեց Էջմիածին՝ դառնալով վանքի միաբաններից մեկը:

Չեկիստ Աղաբեկովի գիրքը մեկ անգամ ևս ապացուցում է այն փաստը, որ Մեսրոպ Մագիստրոսը ՊԱԿ-ի գործակալ չի եղել:

1930 թ. վախճանվեց Գևորգ Ե կաթողիկոսը: Կաթողիկոսական Աթոռը մնում էր թափուր մինչև 1932 թ.: Հայաստանի իշխանությունները թույլ չէին տալիս անցկացնելու Ազգային-եկեղեցական ժողով և կաթողիկոսի ընտրություններ: 1930 թ. սեպտեմբերի 7-ին Թիֆլիսից ՀԿ(բ)Կ Կենտկոմը մի փաս-

տաթուղթ ստացավ Անդրպետքաղվարչության նախագահի տեղակալ Լ. Բերիայի ստորագրությամբ, որը կոչվում էր «Զեկուցագիր հայ հոգևորականության վերաբերյալ»: Այս անվանումից ստորև գրված էր. «Համառոտ զեկուցագիր Հայոց Եկեղեցու նոր կաթողիկոսի առաջիկա ընտրության մասին և այդ բանի առթիվ մեր խնդիրների վերաբերյալ»: Եզրակացության մեջ հիմնական տեղեկանք էր տրվում կաթողիկոսական առաջիկա ընտրությունների թեկնածուների մասին: Մեզ հետաքրքրող Մեսրոպ Մագիստրոսի վերաբերյալ «Կաթողիկոսության թեկնածուների» գլխում գրված էր. «1. Մեսրոպ արքեպիսկոպոս Տեր-Մովսիսյանը, Սպահանի թեմի առաջնորդ, նախկին միապետական, Վորոնցով-Դաշկովի մտերիմ»: Փարիզում լույս տեսնող ռամկավարների թերթում ելույթ ունեցավ արտասահմանում գտնվող բանաստեղծ Ավ. Իսահակյանը: Նա գրում էր. «Կաթողիկոսի պաշտոնի հավանական թեկնածու են համարում կա՛մ Խորեն արքեպիսկոպոս Մուրադբեկյանին, կա՛մ Մեսրոպին»: Վերջապես 1932 թ. նոյեմբերի 10-ին թույլ տրվեց և անցկացվեց Ազգային-եկեղեցական ժողով, և Մեսրոպ Մագիստրոսը, ստանալով տասը ձայն, գրավեց երրորդ տեղը կաթողիկոսության թեկնածուների շարքում: Կաթողիկոս ընտրվեց Խորեն Մուրադբեկյանը:

Նախորդ ընտրություններից անցել էր քսան տարի: Այն ժամանակ էլ Մեսրոպ սրբազանը նույնպես երրորդն էր: Ներկա ընտրությունները ցույց տվեցին, որ նախկին բանսարկությունները, զրպարտանքները Մեսրոպ սրբազանի հասցեին ոչ մի նստվածք չեն թողել Հայոց Եկեղեցու բարձրագույն ղեկավարների սրտում: Մեսրոպ Մագիստրոսը բաց ճակատով և մաքուր խղճով առաջադրել էր իր թեկնածությունը, իսկ հոգևորականները տվել էին իրենց ձայնը: Սա մեկ անգամ ևս ապացուցում էր, որ նրա հասցեին եղած բոլոր մեղադրանքները անհիմն են:

1938 թ. ապրիլի 5-ի լույս 6-ի գիշերը Խորեն Ա Կաթողիկոսը խեղդամահ արվեց պետանվտանգության գործակալների ձեռքով: Էջմիածնի վանքում կաթողիկոսից բացի գտնվում էին Մեսրոպ արքեպիսկոպոս Տեր-Մովսիսյանը, Արիստակես եպիսկոպոս Զուլալյանը, ինչպես նաև վանքի մի քանի սպասավորներ: Հոգևորականների մյուս մասը աքսորում-բանտում էր կամ գնդակահարված և կամ էլ հասցրել էր հեռանալ Էջմիածնից:

Խորեն Ա Կաթողիկոս Մուրադբեկյանի մահից հետո կաթողիկոսական Աթոռի գլխավոր թեկնածու դարձավ Մեսրոպ Մագիստրոսը: Թիֆլիս մեկնած Գևորգ արքեպիսկոպոս Չորեքչյանը շտապ վերադարձավ Էջմիածին: Իշխանությունները վերստին սկսեցին վարկաբեկել Մեսրոպ Մագիստրոսին: Արդեն 1938 թ. հունիսի 11-ին Վրաստանի հայ բոլշևիկների «Գրոլետար» թերթում հրապարակվեց հակակրոնական ընդարձակ մի հոդված՝ «Լրտեսության որջը» վերնագրով, Ս. Սուրգունյան ստորագրությամբ: Առաջին իսկ տողից զգացվում էր, որ այդ հոդվածը գրված է վերադասի ցուցումով, որոշակի նպատակով՝ որոշակի մարդկանց վարկաբեկելու, ահաբեկելու և զրպարտելու: Այդ հրապարակման գլխավոր պատճառը բացահայտվում էր շարադրանքի վերջում. անմիջապես պարզ էր դառնում, թե ինչի՛ և ո՛ւմ համար է այն գրված: Հասկանալի էր, որ այն ուղղված էր Մեսրոպ արքեպիսկոպոս Տեր-Մովսիսյանի դեմ: «Պատմությունը չի կարող մոռանալ Կովկասի փոխարքա Վորոնցով-Դաշկովի գերազանց լրտես, հայ արքեպիսկոպոս Մեսրոպին, որին փոխարքայի կինը արժեքավոր ընծաներ էր տալիս, հաճախակի ճաշերի էր հրավիրում և կաթողիկոսություն էր խոստանում»: Հասկանալով, որ հոդվածը որոշակի նպատակ է հետապնդում՝ մեկուսացնել իրեն կաթողիկոսի

առաջիկա ընտրություններից, չէր բացառվում նաև ֆիզիկական հաշվեհարդարը: 73-ամյա Մեսրոպ Մագիստրոսը 1938 թ. օգոստոսի 17-ին Գերագույն Հոգևոր Խորհրդին ներկայացնում է հետևյալ գրությունը. «1. Խորեն Կաթողիկոսի մահվան լուրը կաթողիկոսարանում լսելով՝ ջղային ցնցման մեջ ընկա, հանգստանալուց հետո դիմեցի ներկա եղող պետական պաշտոնյաներին և ասացի՝ «...Խնդրում եմ հնարավոր դարձրեք Երևանում ինձ մի սենյակ հատկացնելու, որ ընդմիշտ հեռանամ վանքից»... 2. Գալիս եմ հայտարարելու, որ հաստատուն եմ նախապես ընդունած և պաշտոնական անձանց հայտնած, ի ներկայություն բոլոր միաբանների որոշմանը, թողնում եմ Էջմիածնի միաբանական շարքը, թողնում և հրաժարվում հոգևոր կոչումից»:

1938 թ. սեպտեմբերի 25-ին տեղի ունեցավ Գերագույն Հոգևոր Խորհրդի նիստ ոչ լրիվ կազմով, որը որոշեց. «Գերագույն Հոգևոր Խորհուրդը նկատի առնելով Մեսրոպ արքեպիսկոպոսի ընթացքը վանքում ու թեմերում, որոշեց. 1. Զրկել Մեսրոպ արքեպիսկոպոս Տ. Մովսիսյանին հոգևոր կոչումից և կարգել ըստ իր խնդրանաց և դասել ի շարս աշխարհականաց, 2. Հանել նրան Էջմիածնի վանքի միաբանության շենքից, 3. Պահանջել նրանից Եկեղեցու և հասարակական հիմնարկությունների օգտին հանգանակած գումարների հաշիվը, 4. Պահանջել նրանից Էջմիածնի վանքին պատկանող գրամեքենան, պանակեն, լանջախաչը, թանկարժեք մատանին և մնացած բոլոր իրերը, 5. Այս բոլորի մասին շրջաբերականով հաղորդել թեմերին և Խորհրդային Հայաստանի կառավարությանը»:

Որոշման վերջում բացահայտվում են նրա նկատմամբ այդքան դաժան վերաբերմունքի շարժառիթները. «Սակայն Մեսրոպ Տ. Մովսիսյանը մոռանում է, որ իր գործունեության հաշվեկշիռը, իր կյանքի պատմության նժարին խստորեն ծանրանալու է իբրև սարսափելի կոշմար հայ ժողովրդի արյան և կոտորածի փաստը, որ հետևանք էր համաշխարհային պատերազմի ընթացքում տեղի ունեցած հայկական կամավորական շարժման, որի գլխավոր նախաձեռնողներից և ղեկավարներից մեկն էր Մեսրոպ Տ. Մովսիսյանը: Հայ ժողովրդի համար այդ կործանարար գործում անչափահաս Մեսրոպ արքեպիսկոպոսը ցարական սատրապ Վորոնցով-Դաշկովի ագենտն ու գործիքն է եղել: Մեսրոպի այդ դերը Թիֆլիսի կուսակցական «Պրոլետար» հայկական թերթը խիստ տեղին է երիցս անվանել շպիոնություն: Եվ ըստ արժանվույն»:

Գերագույն Հոգևոր Խորհուրդը ոչ միայն իրազեկ էր «Պրոլետար» թերթի հոդվածին, այլև, օգտվելով Մեսրոպ սրբազանին թերթի տված գնահատականից, նրան մեղադրում է ազգայնամոլության և լրտեսության մեջ: Այո, նա ամեն ինչ անում էր, որպեսզի ցարական աստիճանավորները փոխեին իրենց վերաբերմունքը հայ ժողովրդի հանդեպ, որպեսզի անհետանար ռուս շովինիստական կարգախոսը՝ «Հայաստանն առանց հայերի»:

Նախկին արքեպիսկոպոսին Էջմիածնի միաբանությունից վտարելու մասին Գևորգ արքեպիսկոպոս Չորեքչյանը 1938 թ. սեպտեմբերի 27-ին շտապեց տեղյակ պահել Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս Սահակ Բ-ին: Բացի այդ, Գերագույն Հոգևոր Խորհրդի որոշման շարադրանքը թարգմանվեց ռուսերեն, բազմացվեց և ուղարկվեց տարբեր հասցեներով:

Հոգևոր ծառայությունը թողնելուց հետո, Մեսրոպ Տեր-Մովսիսյանը բնակվում էր Երևանում, միայնակ, մեկուսնյականց բնակարանում, ամբողջությամբ նվիրվելով ձեռագրերի ուսումնասիրությանը՝ միաժամանակ դասախոսելով Երևանի համալսարանում: Նրա առողջությունը քայքայված էր:

Նրան մի քանի անգամ այցելել էին հանրապետական ներքգործժողկոմատի աշխատակիցները... Բայց տեսնելով, որ նա ձեռագրերի վրա աշխատող անմեղ մի ծերուկ է և խորհրդային իշխանության համար ոչ մի վտանգ չի ներկայացնում, հանգիստ էին թողել: Մահը վրա հասավ 1939 թ. հունիսի 3-ին: Երբ մահից հետո նրա բնակարանը մուտք գործեցին ներքգործժողկոմատի աշխատակիցները, բնակարանը դատարկ գտան: Նրա անշուք բնակարանում չկային գանձեր և զարդարանք: Անվանի այդ մարդուն թաղեցին Երևանի գերեզմանատանը որպես հասարակ քաղաքացի: Թաղման օրը Վրթանես եպիսկոպոսը Երևանից Էջմիածին հեռագրեց Գևորգ արքեպիսկոպոս Չորեքչյանին՝ Մեսրոպ Մագիստրոսի մահվան մասին ընդամենը երկու բառով՝ «Մեսրոպը մեռավ»: Նրա մահվան մասին լուրը մամուլում չարձանագրվեց:

Հսկայական է Մեսրոպ Մագիստրոսի գիտական վաստակը: Նա թողել է 130-ից ավելի աշխատություններ, որոնցից չափազանց կարևորագույնների շարքը կարելի է դասել «Ընդհանուր ցուցակ հայերեն ձեռագրաց»-ը, որում տեղ է գտել հայերեն շուրջ 23500 ձեռագրերի մանրամասն նկարագրություն:

Միայն 1989 թ. Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Ա-ի կարգադրությամբ Մեսրոպ Մագիստրոսի աճյունը Երևանի քաղաքային գերեզմանոցից տեղափոխվեց Ս. ԳԱՅԱՆԵԻ վանքի միաբանության գերեզմանոցը: Մայր Աթոռի միաբանությունը Տ. Ներսես արքեպիսկոպոս Պոզապալյանի գլխավորությամբ ջերմեռանդ աղոթքով և հանդիսավորությամբ կատարեց այդ սուրբ արարողությունը:

Եթե խորհելու լինենք Մեսրոպ Մագիստրոսի կյանքի մասին, ապա ստացվում է, որ նրա ապրածը մերժված մարդու կյանք է: Նախանձը, բանսարկությունը, ատելությունը անընդմեջ ուղեկցել են նրան՝ մեծ հայրենասերին ու քաղաքացուն: Ճակատագիրը կամ անբարեկիրթ մարդիկ անընդհատ մերժել և հետապնդել են նրան: Վտարել են իր թեմից, Կովկասից, գիտությունից, հարազատ Եկեղեցուց և, վերջապես՝ կյանքից:

Մեսրոպ Մագիստրոսը, սակայն, միշտ հավատարիմ է մնացել Եկեղեցուն, հարազատ ժողովրդին՝ ամենից բարձր դասելով նրա շահերը: Եվ խոհերը հանգիստ չէին տալիս իրեն՝ ինչպես անել, որ փոքր-ինչ թեթևացվեն բազմաչարչար հայ ժողովրդի տառապանքները: Այս մարդու մեղքը սոսկ այն էր, որ նա առնվազն մեկ գլխով բարձր, խելոք, բարեկիրթ և գործունյա էր, քան իրեն շրջապատողները:

ՍՏԵՓԱՆ ՍՏԵՓԱՆՅԱՆՑ